«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ «Ազգային տոների, ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները կրթական գործընթացում»

Դաստիարակ՝ **Աննա Ավետյան**

Մանկապարտեզ՝ «Եղեգնաձոր համայնքի Գետափ բնակավայրի «Արևիկ» մանկապարտեզ» ՀՈԱԿ

2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3

ԳԼՈՒԽ 1. ԱԶԳԱՅԻՆ ՏՈՆԵՐԻ, ԾԵՍԵՐԻ.....4

ԳԼՈՒԽ 2. ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ.....6

2.1 Զգացմունքային զարգացում.....9

2.2 Հայկական տոների և ծեսերի համառոտ նկարագիրը.....10

2.3 Հետազոտության ընթացք՝Զատիկի տոնակատարությունը մանկապարտեզում.....11

2.4 Օրինակելի պարապմունք.....12

2.5 Դիտարկում.....14

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....15

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Նախադպրոցական տարիքը կարևորագույն շրջան է անձի կայացման և բնականոն զարգացման համար, որը մեծապես կախված է երեխայի շրջապատող միջավայրից: Նախադպրոցական տարիքը ընդգրկում է երեխայի կյանքի 3-ից մինչև 6 տարեկան ընկած ժամանակահատվածը: Սա մեծ ձեռքբերումների փուլ է, որը նշանավորվում է երեխայի հաղորդակցման ոլորտի ընդլայնման, ինքնագիտակցության ձևավորման և մի շարք փոփոխություններով: Նախադպրոցական տարիքը երեխայի զարգացման գործընթացում սոցիալական նոր դերեր է պահանջում: Նախադպրոցական տարիքում հետազոտական աշխատանքի նպատակն է ուսումնասիրել երեխայի խոսքի և հաղորդակցության զարգացման կարևորությունը: Նախադպրոցական կրթության ոլորտում, ինչպես երեխաների զարգացման բոլոր ուղղություններով, այնպես էլ ազգային դաստիարակության առումով բարեփոխումները ոչ միայն անհրաժեշտ են, այլև անխուսափելի: Այս տեսանկյունից հայ ժողովրդական բանահյուսության տարբեր ժանրերը, որոնք հարազատ են հայ ազգային հոգեբանությանը, առավել արդյունավետ կերպով կարող են ներգործել նախադպրոցականների ներաշխարհի վրա: Նախադպրոցական խմբերում ընտրել և փորձարկել ազգային տոների, ծեսերի և ծիսական գործունեության ընթացքում երեխայի խոսքի և սոցիալական հմտությունների զարգացմանը նպաստող գործունեություն, խաղեր, երգեր, պարեր և այլն:

ԳԼՈՒԽ I

ԱԶԳԱՅԻՆ ՏՈՆԵՐԻ, ԾԵՍԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մշակույթը չէր պահպանվի և սերնդեսերունդ չէր փոխանցվի, եթե գոյություն չունենային դրան նպաստող որոշակի միջոցներ, որոնցից կարող ենք առանձնացնել պատմության ընթացքում ձևավորված ծեսերը: Ծեսն իրենից ներկայացնում է ավանդական կամ սահմանված կանոններով կատարվող կրոնական արարողություն, որին հավատացյալները վերագրում են մոգական և խորհրդավոր հատկություններ: Ծեսը լայն տարածում ունի հավատալիքներում, կրոնում, կենցաղում և այլն: Ծեսը խորհրդանշական ձևով վերարտադրում է ժողովրդի անցյալի կարևոր փուլում կատարված իրադարձությունները և դրանց միջոցով ապահովում ազգի, հասարակության միասնությունը: Ծեսերի շնորհիվ պահպանվել և սերնդեսերունդ են փոխանցվել ազգային կյանքի բոլոր էական կողմերը, արտացոլել են էթնոսի բնորոշ առանձնահատկությունները: Եթե մշակույթի ժառանգորդման առաջին ձևը համարենք ծեսը, ապա երկրորդը ծիսակարգն է: Ծիսակարգը մարմնավորում է մարդկանց վարքի տարբեր կողմերը:

Ըստ Ա. Սարգսյանի [1] «Ծիսակարգը խիստ կանոնակարգված է անփոփոխ, միակերպ և հիմնականում կապվում է կրոնական պատկերացումների հետ, ունի զանգվածային բնույթ, այսինքն՝ դրան մասնակցում են մարդկանց մեծ խմբեր»: Հանդես գալով որպես հասարակական կյանքի հոգևոր ոլորտի խտացումներ ծեսերը, սովորույթները անգնահատելի դեր ունե՝ յուրացումներով ավանդույթի ընդհանուր կառույցի առանձին կողմերը, որի շնորհիվ ավանդույթը դառնում է միասնական և ներդաշնակ մի ամբողջություն: Դրանցում ժողովուրդը հանդես է գալիս և՛ որպես ստեղծագործ, և՛ որպես գործիչ, և՛ որպես քննադատ: Ծեսերը և սովորույթները հասարակական հարաբերությունները փոխանցող մեխանիզմներ են: Մանկապարտեզում երեխայի ներդաշնակ հոգևոր զարգացման կարևոր խնդիրներից մեկը ազգային մշակույթի յուրացումն է՝ ծեսեր, տոներ, որտեղ նրանք դառնում են այս ամենը կրող ու

ակտիվ փոխանցողը: Նախադպրոցական տարիքի երեխայի խոսքի զարգացումը ծեսի իրագործման ընթացքում տեղի է ունենում բնական, հաղորդակցական միջավայրում և մթնոլորտում: Ծեսերը նպաստում են երեխայի բառապաշարի հարստացմանը, մտածողության ձևավորմանը, ստեղծագործական երևակայության զարգացմանը, ինքնուրույն աշխատելու ունակության ձևավորմանը: Ծեսի կամակերպման ընթացքում երեխան խոսում և շփվում է հասակակիցների, մեծահասակների հետ, և սխալ կլինի մտածել, թե երեխայի խոսքը կարելի է զարգացնել միայն խոսքի զարգացման հատուկ պարապմունքների ժամանակ կամ երբ հատուկ ուշադրություն է դարձնում նրա խոսքին:

ԳԼՈՒԽ II

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

Ուսուցման գործնական մեթոդները:

Նախադպրոցականի ուսուցման գործընթացում առաջատար են համարվում ուսուցման գործնական մեթոդները, որոնց խմբին դասվում են տարատեսակ

- վարժությունները
- փորձերը, փորձարարությունը /հետազոտումը/
- մոդելավորումը:

Վարժությունները լինում են տարբեր բնույթի՝ ստեղծագործական և կառուցողական:

Նախադպրոցականի մտավոր դաստիարակության համակարգում, իրենց ուրույն տեղն են զբաղեցնում ուսուցանող, աստիճանաբար բարդացող վարժությունները (ծիսական տիկնիկների և պարագաների պատրաստում):

Շատ կարևոր է երեխային ներգրավել ծեսի նախապատրաստական աշխատանքներին հիմնականում այդ նախապատրաստական աշխատանքները ծիսական պարագաների պատրաստումն է: Այս գործողության ընոացքում երեխաները հնարավորություն են ունենում նկարելու, ներկելու, կտրելու և տարբեր նյութերից ծիսական պարագաներ պատրաստելու: Երեխաները այս ամենը պատրաստելու ընթացքում խոսում են ծեսի մասին, քննարկում, թե ինչն է իրենց դուր գալիս, ինչն են սիրում: Նրանք դաստիարակի միջամտությամբ կարող են պատմել ծիսական տիկնիկի նշանակության մասին: Ինչն էլ խթան է հանդիսանում ավելի սիրել ու կարևորել իրենց ստեղծածը: Նրանք այդ ամենի մասին կարող են պատմել ընտանիքի անդամներին, կարող են հորինել ու ավելացնել նոր դրվագներ, պատմել ու ավելացնել այն, ինչ իրենց հոգում ու միջավայրին է հարազատ: Հենց այն ամենը մեծ ազդեցություն է թողնում երեխայի խոսքին նպաստող սոցիալական, հուզական և մտավոր զարգացման վրա:

Մանկապարտեզում սանի համար ազգային ծեսի ճանաչման ամենաարդյունավետ ձևը խաղն է, այդպես ավելի տպավորիչ ու հասանելի է, հասկանալի և գործնական: Մանկապարտեզում գործունեության հիմնական ձևը իրականացվում է խաղի միջոցով: Խաղը զարգացնում է երեխայի

- ✓ ուշադրությունը
- ✓ հիշողությունը
- ✓ ստեղծագործելու կարողությունը
- ✓ հաղորդակցման կարողությունը
- ✓ շարժողականությունը
- ✓ ճիշտ կողմնորոշվելու կարողությունը
- ✓ ինքնուրույն աշխատելու կարողությունը
- ✓ հարստացնում է բառապաշարը:

Ծիսական խաղերը, բացի հետաքրքիր և տպավորիչ լինելու զարգացնում են մանր և խոշոր մկանային մոտորիկան, ընդհանուր շարժումային համակարգը, դրանք թատրոնի նման սինթետիկ արվեստ են դառնում, որոնք ինտեգրում են ինչպես երեխայի զարգացման բոլոր ոլորտները, այնպես էլ գործունեության տարբեր ձևերը: Աշխատանքի ընթացում օգտագործված հիմնական մեթոդներից են

- ✓ իրավիճակների խաղարկում
- ✓ դերախաղ
- ✓ խմբային աշխատանք:

Այդ խաղերը կարելի է խաղալ ինչպես համապատասխան ծեսի, այնպես էլ ցանկացած ժամանակ՝ անհրաժեշտության դեպքում: Եթե կան ընկույզներ, ուրեմն կարելի է խաղալ ընկույզով խաղեր, տիկնիկներով խաղալու համար պարտադիր չէ սպասել բարեկենդանին, եթե հարկավոր է «չքացնել, աղալ» ամեն վատը և խանգարողը, պարտադիր չէ սպասել Զատիկի Ավագ շաբաթվա չորեքշաբթի օրվան, եթե աշխատելիս կարիք կա սանի ուշադրությունը գրավել «չքացնել, աղալ» նրա (նրանց) ցրվածությունը:

Տվյալ դեպքում ծիսական խաղը, բացի հիմնովին յուրացնելուց երկու կողմերի համար դառնում է հետաքրքիր ու անմիջական շփման միջոց՝ ներառելով իր մեջ, բացի իմացականից նաև՝ հումոր:

Ծիսական երգն ու երաժշտությունը մեծ ազդեցություն է գործում երեխայի խոսքի զարգացման հետևյալ ասպեկտների վրա:

ԶԳԱՑՄՈՒՆՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Յուրաքանչյուր մշակույթ ունի երաժշտական դրսևորման իր ուրույն պարզունակ օրինակները, որոնք երեխաները հեշտորեն կարող են յուրացնել և դրանց միջոցով արտահայտել իրենց զգացմունքները: Երեխաների զգացմունքներին շատ դրական է ազդում այն, երբ նրանք տեղեկանում են, թե ովքեր և երբ են կատարել այդ երգերը: Երեխաները մեծ սիրով, ջերմությամբ են կատարում, ինչի մոջոցով էլ արտահայտում են իրենց հրճվանքն ու ուրախությունը: Ներկայացրած բոլոր տեսական դրույթները կիրառեցինք գործնականում և համոզվեցինք, որ իրոք ծեսը, կարևոր նախապայման ու հարմար միջավայր է երեխայի խոսքի զարգացման ու հաղորդակցման համար: Երեխաները ծեսի կազմակերպման ընթացքում փոխանակում են մտքեր ու կարծիքներ, խոսում և հաղորդակցվում են անկաշկանդ, պատմում շրջապատից լսած տեղեկություններ և տալիս մեկնաբանություններ: Համոզվեցինք, որ ծիսական խաղերը նույնպես դրական ազդեցություն ունեցան երեխայի խոսքին նպաստող մյուս ոլորտների՝ հուզական, սոցիալական և մտավոր զարգացման վրա: Մանկական ազգային ծիսական խաղերը երեխաների համար շատ կարևոր ու պահանջարկ ունեցող նյութեր են:

ՀԱՅԿԱԿԱՆ ՏՈՆԵՐԻ ԵՎ ԾԵՍԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Երեխայի ներդաշնակ հոգևոր զարգացման կարևոր խնդիրներից մեկը ազգային մշակութի յուրացումն է՝ ավանդույթների, ծեսերի, տոների տեսքով: Երեխան դաստիարակվում և սովորում է յուրացնելով մեծերի փոխանցած մշակույթը: Ծեսերին նոր կյանք տալու համար հարկավոր է լավ յուրացնել ավանդականը ճանաչել այն միջավայրը, որտեղ ստեղծվել են դրանք: Պետք է լավ իմանալ երգերն ու պարերը ծիսական գործողությունները: Երեխան ամենօրյա արդյունավետ գործունեությամբ, կարողություններ և հմտություններ ձեռք բերելով ու փոխանցելով յուրացնում է ծեսը:

Հայերի նախնիներից մեզ մնացած տոներից և ծեսերից են՝ Նավասարդը, Տյառնընդառաջ կամ Տրնդեզը, Սուրբ Սարգիսը, Բարեկենդանը, Ծաղկազարդը, Զատիկը, Վարդավառը և այլն:

Տոները հետևում են իրար և կապ ունեն բնության և տարվա եղանակների հետ: Փետրվարի 13-ին նշում ենք Տյառնընդառաջը, որը Հայ Առաքելական եկեղեցու տերունի և անշարժ տոներից է: Այն նշվում է Սուրբ Ծննդից քառասուն օր հետո: Այդ օրը պատրաստում են աղանձ, դրան խառնում քաղցրեղեն և բաժանում արարողությանը ներկա գտնվողներին: Տրնդեզի օրը եկեղեցիների բակում մեծ խարույկ են վառում: Ամուսնացող զույգերը Աստծո օրհնությամբ թռնում են կրակի վրայով: Ամենայն հայոց Գարեգին Բ Հայրապետի տնօրինությամբ Ս. Սարգիս զորավարի տոնը հռչակվել է երիտասարդների օրհնության օր: Տոնը շարժական է: Ս. Սարգսի տոնին նախորդում է Ս. Գրիգոր Լուսավորչի կողմից հաստատված Առաջավորած պահքը: Սուրբ Սարգիսը երիտասարդների արագահաս բարեխոսն է: Ս. Սարգիսը սիրո երազանքն իրականացնող սուրբն է: Ս. Սարգսի տոնին նախորդող գիշերը երիտասարդների՝ աղի բլիթ ուտելը, որի հետ նրանք կապում են իրենց փեսացուի կամ հարսնացուի երազահայտնությունը: Ըստ ավանդույթի՝ Ս. Սարգիսը պետք է հրեշտակների ուղեկցությամբ անցնի և ում մատուցարանի մեջ դրված ալյուրի մեջ թողնի իր սպիտակ ձիու պայտի հետքը, այդ տարի կիրականանա երիտասարդի երազանքը:

Հաջորդը Բարեկենդանն է, որը նշանակում է բարի կենդանություն: Տոնը կապված է գարնան գալու հետ և խորհրդանշում է արթնացող բնությանը ուրախ դիմավորելը: Բարեկենդանը Հայ Առաքելական եկեղեցու շարժական տոն է: Նշվում է Սուրբ Սարգսի տոնից մինչև Մեծ պասն ընկած ժամանակահատվածում: Զատիկից մեկ շաբաթ առաջ՝ ի հիշատակ Քրիստոսի Երուսաղեմ մտնելու օրվա, նշվում է Ծաղկազարդը: Այդ օրը հայոց եկեղեցիները զարդարվում են ուռենու ճյուղերով, իսկ ժամերգությունից հետո օրհնված ճյուղերը բաժանվում են հավատացյալ ժողովրդին որպես բարիք, առատության, պտղաբերության խորհրդանիշ:

Զատիկին հաջորդում է Համբարձման տոնը, որի հիմքում վիճակ խաղն է: Ծեսին նախապատրաստվելիս յոթ աղջիկ յոթ աղբյուրից, յոթ բաժակ ջուր են վերցնում, յոթ տեսակի ծաղիկ, յոթ ծաղկից յոթ տերև, հոսող առվից յոթ տեսակի քար և բարեմաղթանքներ նվիրում հանդիպող մարդկանց:

Վարդավառը Հայ Առաքելական եկեղեցու հինգ տաղավար տոներից է: Վարդավառի տոնը կապում էին հայկական դիցաբանության ջրի, սիրո, պտղաբերության և գեղեցկության աստվածուհի Աստղիկի հետ: Ժողովրդական մեծ հանդիսություններով Աստղիկին վարդեր են նվիրում, միմյանց վրա ջուր ցողում, աղավնիներ էին բաց թողնում, որպես խաղաղության նշան:

Հետազոտության ընթացքը՝ Զատիկի տոնակատարությունը մանկապարտեզում

Նախադպրոցական երեխաների դաստիարակության վառ օրինակ է Զատիկի տոնակատարությունը մանկապարտեզում: Մինչ տոնն անցկացնելը անհրաժեշտ է պահպանել ծիսակարգը և երեխաներին ընկալելի դարձնել դրա բովանդակությանը: Դա կատարեցինք ավագ խմբում՝ թեմատիկ պարապմունքի միջոցով:

ՕՐԻՆԱԿԵԼԻ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

Ծրագրային բաղադրիչ՝ Խոսքի զարգացում

Թեմա՝ Սուրբ Զատիկ

Տևողությունը՝ 25-30 ր.

Նպատակը՝ Ճշտել և ամրապնդել երեխաների գիտելիքները ծեսերի և ազգային տոների մասին՝ հատկապես Զատիկի: Տալ տեղեկություն տոնի մասին: Երեխաները պետք է իրական տոնի մասնակիցը լինեն:

56- տարեկան երեխան դաստիարակի հետ ամբողջական ծեսին մասնակցելով, յուրացնելով ծեսի նյութը, դառնում է այդ նյութի կրողը և զարգացնողը: Ծեսը իր մեջ ներառում է երգ, պար, խաղ: Զարգացնել երեխաների բանավոր խոսքը: Դաստիարակել հայրենասիրություն:

Ընթացքը

Դեռևս Ծաղկազարդին երեխաների հետ մեկտեղ ցանեցինք ցորենը և մինչև Զատիկ խնամեցինք: Թեմատիկ շաբաթվա մասին տեղյակ պահեցինք ծնողներին և խնդրեցինք աջակցել մեզ: Սուրբ Զատիկի մասին գիտելիքներ հաղորդեցինք երեխաներին: Սովորեցին տերունական «Հայր մեր» աղոթքը: Հարստացրեցի բառապաշարը նոր բառերով և բառակապակցություններով: Իրար ավետեցինք «Քրիստոս հարյավ ի մեռելոց» պատասխանելով «Օրհնյալ է հարությունը Քրիստոսի»:

Խթանման փուլ – սեղաններին դրեցինք ծլեցրած ցորեններ, որոնց մեջ դրեցինք նախապես ներկած ձվեր: Խմբասենյալը ձևավորել ենք ազգային տարազի մոտիվներով պատրաստված տիկնիկներով և Սուրբ Զատիկը խորհրդանշող այլ՝ աքսեսուարներով: Խմբասենյակում յուրաքանչյուր երեխա իր հետ բերել էր մոմեր:

Սեղաններին դրված են Զատիկի կերակրատեսակներ, որոնք պատրաստել են մեր սաների մայրիկներն ու տատիկները՝ հալվա, չամչով փլավ, գունավոր ձվեր, կարմիր

գինի, փոխինդ նաև սեղանին դրեցինք գաթա, որը երեխաներն իրենց ձեռքով էին պատրաստել՝ խոհարարի օգնությամբ: Սովորել ենք երգեր ու պարեր նվիրված Սուրբ Զատիկի տոնին՝ «Բարի հրեշտակ», [Ռ. Հարոյան Զատիկ Երևան 1996], «Զատիկ» [Հայկական ժողովրդական]:

Երեխաների հետ խաղացինք զատկական խաղեր՝ ձուգլորոցի, ձուկռվոցի, ձուպտտոցի:

Ծանոթացանք նաև, որ Զատիկի ծոսի գլխավոր խորհրդանիշը ձուն է: Այն համարել են աշխարհի օրինակ: Դրսի կեղևը՝ երկինք, սպիտակ թաղանթը՝ օդ, սպիտակուցը՝ ջուր, իսկ դեղնուցը՝ երկիր: Ձու ներկելը կարևոր ավանդույթ է Հրաշափառ հարության տոնին:

Նյութեր – մոմեր, չամիչ, չրեր, հալվա, սիսեռ, գաթա:

Կշռադատման փուլ – Երեխաներ ի՞նչ տոն ենք մենք տոնում: Ի՞նչ պատրաստեցինք, ինչի՞ համար էին ներկած ձվերը:

Ամփոփում - Ի՞նչը ձեզ դուր եկավ երեխաներ և ի՞նչը ամենից շատ հավանեցիք:

ԴԻՏԱՐԿՈՒՄ

Նախադպրոցական տարիքի երեխաների հայեցի դաստիարակությանվառ օրինակներ են ազգային տոների և ծեսերի կատարումը մանկապարտեզում: Ավագ խմբում ընկերն Աննայի անցկացրած թեմատիկ շաբաթը նվիրված էր Զատկի տոնին: Նա իր առջև խնդիր էր դրել երեխաներին հաղորդել գիտելիքներ ազգային և կրոնական ծեսերի, ժողովրդական խաղիկերի, խաղերի մասին և թե ինչ խորհուրդ են դրանք պարունակում:

Պարապմունքը սկսեց ազգային երգի ուղղությամբ: Կիրառեց զրույցի, մտագրոհի, հարցադրումների, ցուցադրման, խաղային մեթոդներ: Դաստիարակը երեխաներին ներգրավեց խաղային և խոսքային փոխկապակցվածության մեջ, որի շնորհիվ երեխաները ակտիվորեն մասնակցում էին ընդհանուր զրույցին: Երեխաների բառապաշարը հարստացավ նոր արտահայտություններով: Ընկեր Աննան անընդհատ խրախուսում էր երեխաներին, մղում ավելի անելու, որքան թույլ էր տալիս նրանց անհատական հնարավորությունները, որպեսզի երեխան միշտ հավատա իրուժերին, ինքնավստահ լինի:

Ելնելով դաստիարակի կատարած հետազոտական աշխատանքից, եկա այն եզրահանգմանը, որ նա երեխաների մեջ ձևավորեց բարոյական արժեքներ, հայրենասիրություն և սեր դեպի ազգային ծեսերը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

-Այսպիսով ծեսերի և տոների իրականացումը մանկապարտեզում նպատակ ունի երեխաներին փոխանցել մշակութային ժառանգության բազմաշերտ արժեքները՝ նպաստելու երեխաների հայեցի դաստիարկությանը և իրական արժեքների ձևավորմանը: Ծեսը այն միջավայրն է, որտեղ մասնակիցները նախապատրաստական փուլում և իրականացման ընթացքում կիրառում են իրենց կարողությունները, հմտությունները և գիտելիքները: Երեխաները քայլ առ քայլ անկաշկանդ միջավայրում ամենօրյա արդյունավետ գործունեությամբ, լիիրավ մասնակցությամբ, կարողություններ և գիտելիքներ ձեռ բերելով և փոխանցելով, յուրացնում են ծեսը: Ազգային տոների և ծեսերի կազմակերպումը անհատի ձևավորման և ներդաշնակ զարգացման առումով պարունակում է շատ մեծ ներուժ և դրա ուսուցումընախադպրոցական տարիքի երեխաների միջավայրում ազգայի մշակույթի յուրացման հիմնական միջոցներից է և անմիջականորեն առնչվում է մտավոր, բարոյական և գեղագիտական դաստիարակության խնդիրներին:

Հետազոտական աշխատանքը ցույց տվեց, որ նախադպրոցական տարիքի երեխան ծիսական, բնական ազատ միջավայրում կիրառում է գիտելիքները, հմտություն է ձեռք բերում, զարգանում է երևակայությունը կարողանում է ազատ արտահայտել իր միտքը: Զարգանում է նաև խոսքը, երեխան նոր բառերն արտասանում է դաստիարակի հետ, կրկնում, շտկում ճիշտ արտաբերումը առանց լարվելու:

- Կարողանում է կողմնորոշվել և կատարել համապատասխան գործողություններ բանավոր խոսքի միջոցով հիմնավորելով, ներկայացնելով իր երևակայությամբ ստեղծած միտքը:
- Զարգանում է սոցիալական հմտությունները, երեխաները սկսում են մեկը մյուսին օգնել, աջակցել, հարգել դիմացինի խոսքը և այլն:
- Զարգանում է երեխայի երևակայութունը, ուշադրությունը:

- Եվ ամենակարևորն այն է, որ երեխան մանկապարտեզից իր հետ տանի հրճվանք, ուրախություն, բարություն:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Լալա Սմբատյան «Տոնական ղողանջներ»
2. Նախաշավիղ 2013թ.
3. Հրանուշ Խառատյան – Առաքելյան «Հայ ժողովրդական տոները»: